տութիւն տուեց ռուս ազգի այդ վաղեմի տենչանքին։ Դեռ Հոլլանդիայում եղած ժամանակ, երբ նա իբրեւ հասարակ բանուոր նաւաշինութիւն էր սովորում, պատրաստել էր տուել մի մեդալ, վրան իր պատկերը եւ շուրջը գրուած «յունաց թագաւոր»։

Մինչեւ անգամ նա գործակալներ ուղարկեց յոյների եւ Բալքանեան սլաւոնների մօտ քարոզելու, թէ արդէն ժամանակ է ոտքի ելնելու եւ Ռուսաստանին միանալով, տաճիկներին Եւրոպայից դուրս քշելու։

Եկատերինայի օրով այդ մտքին կրկին յարութիւն տուեց Պոտեմկինը եւ պիտի ասել որ լայն համակրութեան արժանացաւ այդ միտքը պետական բարձր շրջաններում եւ մանաւանդ կայսրուհու կողմից։

Նորից մարդիկ ուղարկուեցին Բալքաններն ու Յունաստան՝ ապստամբութիւն առաջացնելու։ Լսեցին միայն յոյները եւ չարաչար պատժուեցին։1777–ին Պետերբուրգում բացուեց մի զինուորական դպրոց յատկապէս Ղրիմի յոյների համար։ 1779–ին ծնուեց Եկատերինայի երկրորդ թոռը, որին կայսրուհին նշանակեց յունական վերանորոգուելիք դահի ժառանգ. այդ պատճառով էլ անունը դրին Կոնստանդին, որ Բիւզանդական վերջին կայսեր անունն էր։

Պոտեմկինը մեծ հանդէս սարքեց իշխանի ծննդեան առթիւ. հրաւիրուած կանանց առջեւ դրուած էին ադամանդներով լիքը բաժակներ։ Կարդացուեցին յունական ոտանաւորներ։ Օրուան առթիւ պատրաստուած մեդալի վրայ նկարուած էին Այա Սոֆիան, Սեւ ծովը, հրդեհուած մի մզկիթ, որի քանդուող մինարէթի վրայ փայլում էր խաչը։

Մեծ իշխան Կոնստանդինի համար խաղընկերներ ընտրում էին յունական դպրոցի աշակերտներից. նրան սովորեցրին յունարէն։ Կայսրուհին անգլիական դեսպանին խօսակցութեան մէջ յայտնեց, որ յոյներին մեծ ու դեղեցիկ ապագայ է սպասում1)

Նման մէկ ծրագիր Պոտեմկինն ունէր նաեւ Հայաստանի համար, որի դահը նա վերապահում էր արքայական տան անդամներից մէկին, իսկ չար լեզուների ասելով՝ իրեն։ Ահա այդ ծրագրի շուրջն էր, որ եռանդուն բանակցում էին — մի կողմից՝ Պոտեմկինը եւ նրա ներկայացուցիչ հռչակաւոր զօրավար Սուվորովը, իսկ միւս կողմից՝ Արղութեանն ու Յովհաննէս Լազարեանը։

Ռուսաց եւ հայոց յարաբերութիւններն այնքան բէալ բան են դառնում, որ հարկ է լինում մէկ յատուկ դաշնագրութեամբ — 1779 թուին — ճշդելու Ռուսաստանի եւ անկախ Հայաստանի փոխյարաբերութիւնները։

Դաշնագիրը բաղկացած էր երկու մասից. մէկը Հայաստանի կողմից էր (18 յօդուած) եւ սահմանում էր Հայաստանի իրաւունքներն ու պարտականութիւնները Ռուսաստանի հանդէպ։ Միւսը (20 յօդուած) Ռուսաստանի կողմից եւ սահմանում էր Ռուսաստանի իրաւունքներն ու պարտականութիւնները Հայաստանի հանդէպ։

Դժբախտաբար, դաշնագիրը ռուսաց կողմից չստորագրուեց եւ ուրեմն իրաւական վաւերաթղթի արժէք չստացաւ, որովհետեւ ռուսաց կառավարութիւնն առարկեց, թէ միայն պետութիւնները կարող են իրար հետ դաշինքներ կնքել, իսկ հայերը դեռ պետութիւն չեն կազմում։

Յամենայն դէպս, այդ դաշնագիրը գեղեցիկ կերպով իր մէջ արտացոլում է ժամանակի քաղաքական մտայնութիւնը —հայ եւ ռուս։ Միւս կողմից՝ նա լոյս է սփռում հայ եւ ռուս յարաբերութիւնների վրայ։ Ուստի եւ նրա կարեւորագոյն յօդուածներն այստեղ բերել աւելորդ չենք համարում.—

I.

Յօդ. Ա.— Նախ քան զամենայն, հաստատել զսէր եւ զմիաբանութիւն ի մէջ երկուց ազգացս, որք ի մէջ իւրեանց չունիցին ամենեւին խորութիւն օրինաց — ո՛չ ռուսաց առ հաւատս և յեկեղեցիս մեր և ո՛չ մեր առ նոսա. այլ համարել զմիմեանս միոյ եւ նոյնոյ հաւատոյ եւ եկեղեցւոյ ծնունդ, հիմնեալ ի վերայ փրկչական բանի, թէ «այսու ծանիցին զձեզ թէ իմ աշակերտ էք, թէ զմիմեանս սիրեցէք»։

Յօդ. Դ.— Կապակցութիւն երկուց թագաւորութեանց մեծ դաշամբ յաւիտենականաւ։

Յօդ. Ե.— Լինիցին ի Հայաստան չափա-

1) Լէօ, «Յովսէփ Արղութեան», եր. 99. Բրիկներ, «Պատմ. Եկատերինա Բ.–ի», II, Ս. Պետերբուրգ, 1885, երես 390։